

Կ-1064³-20.09.2016-ՊԻ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

**«ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հոդված 1. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 2011 թվականի մայիսի 26-ի ՀՕ-172-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 32-րդ հոդվածը լրացնելի հետևյալ բովանդակությամբ 5-րդ մասով.

«5. Հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագիրը սահմանված պահանջներին կամ կարգին համապատասխան Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով չներկայացնելն առաջացնում է օրենքով նախատեսված պատասխանատվություն:»:

Հոդված 2. Օրենքը լրացնելի հետևյալ բովանդակությամբ 38.1-րդ հոդվածով.

«Հոդված 38.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովն իր գործունեությունն իրականացնում է աշխատակազմի միջոցով:

2. Աշխատակազմի կազմակերպական կառուցվածքը, կանոնադրությունը, աշխատողների առավելագույն թիվը և հաստիքացուցակը հաստատում է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը:

3. Աշխատակազմի աշխատողների վարձատրության, այդ թվում՝ հիմնական և լրացուցիչ աշխատավարձերի հաշվարկների և չափերի, աշխատավարձի բնականոն աճի հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական պաշտոններ

զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 3. Օրենքը լրացնելի հետևյալ բովանդակությամբ 41.1-րդ հոդվածով.

«Հոդված 41.1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ֆինանսավորումը

1. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը ֆինանսավորվում է պետական բյուջեի, ինչպես նաև օրենքով չարգելված այլ միջոցների հաշվին:

2. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով և առաջիկա տարվա բյուջետային գործընթացը սկսելու մասին Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ սահմանված ժամկետում յուրաքանչյուր տարի կազմում և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն է ներկայացնում առաջիկա տարվա իր բյուջետային ֆինանսավորման հայտը (Հանձնաժողովի ծախսերի նախահաշվի նախագիծը):

3. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի բյուջետային ֆինանսավորման հայտի ցուցանիշների համաձայնեցումը և պետական բյուջեի նախագծում դրանց ներառումն իրականացվում է «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

4. Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացված Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի բյուջետային ֆինանսավորման հայտի օրինակն առաջիկա տարվա պետական բյուջեի նախագծի հետ ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողով:

5. Պետական բյուջեի ծախսային մասում Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի ծախսերը ներկայացվում են առանձին տողով:»:

Հոդված 4. Օրենքի 42-րդ հոդվածի 3-րդ մասն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 5. Օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ կետով.

«7) հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագիրը Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողով օրենքով սահմանված ժամկետում չներկայացնելու, կամ հայտարարագրի լրացման նկատմամբ ներկայացվող պահանջների և հայտարարագրի ներկայացման կարգի խախտմամբ ներկայացնելու, կամ հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու դեպքում օրենսդրությամբ սահմանված կարգով վարչական իրավախախտումների վերաբերյալ գործեր քննելը և վարչական տույժեր նշանակելը:»:

Հոդված 6. Եզրափակիչ և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2017 թվականի հունվարի 10-ից:

2. Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմը ենթակա է ստեղծման սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ մինչև 2017 թվականի փետրվարի 15-ը: Մինչև Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի աշխատակազմի ստեղծումը, Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի գործունեության նյութատեխնիկական և կազմակերպական աջակցությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին», «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի վերաբերյալ կատարված առաջարկությունների

Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, ենթակետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը
1	2	3	4
ՀՀ կառավարություն	1.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 3-րդ հոդված	1. Նախագծի 3-րդ հոդվածում լրացվող 244 ¹⁶ -րդ հոդվածի համարակալումը վերանայման կարիք ունի, քանի որ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում արդեն իսկ առկա է 244.16-րդ հոդված:	1. Ընդունվել է. Նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 244 ¹⁶ -րդ հոդվածը համարակալվել է որպես 244.17-րդ հոդված:

<p>2.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 4-րդ հոդված</p>	<p>2. Որպես Նախագծի ուժի մեջ մտնելու ժամկետ նախատեսել 2017 թվականի մայիսի 1-ը: Նշյալ փոփոխությունը կատարել նաև «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» և «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերում:</p>	<p>2. Ընդունվել է. Նախագծում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>
<p>3. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդված</p>	<p>3. «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 6-րդ հոդվածի վերնագիրը համապատասխանեց-նել հոդվածի բովանդակությանը: Մասնավորապես՝ նշված հոդվածի վերնագրում</p>	<p>3. Ընդունվել է. «Անցումային դրույթներ» բառերը փոխարինվել են «Եզրափակիչ և անցումային դրույթներ» բառերով:</p>

		<p>«Անցումային դրույթներ» բառերը փոխարինել «Եզրափակիչ և անցումային դրույթներ» բառերով, նկատի ունենալով, որ նախագծի 6-րդ հոդվածի 1-ին մասը, որը վերաբերում է օրենքն ուժի մեջ մտնելու ժամկետին, իր բնույթով հանդիսանում է ոչ թե անցումային, այլ եզրափակիչ դրույթ: Հիշյալ առաջարկությունը բխում է «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի պահանջներից, որոնց համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի եզրափակիչ մասում կարող են սահմանվել իրավական ակտն ուժի մեջ մտնելու ժամկետները:</p>	
	<p>4.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և</p>	<p>4.«Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի 1-ին հոդվածում «բարձրաստիճան պաշտոնատար անձի գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց մասին</p>	<p>4. Ընդունվել է. Նախագծերում կատարվել են համապատասխան փոփոխություններ:</p>

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծեր

հայտարարագիրը, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի հետ փոխկապակցված անձի գույքի և եկամուտների հայտարարագիրը (այսուհետ՝ սույն հոդվածում՝ հայտարարագիր) դրանք ներկայացնելու պարտականություն ունեցող անձանց կողմից» բառերը փոխարինել «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի (այսուհետ՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ) կողմից հայտարարագիրը», «Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում՝ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագիրը», իսկ «Հանրային

		<p>ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծում՝ «հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից հայտարարագիրը» բառերով:</p>	
--	--	---	--